

յիշատակարաններ, որ տեղի սղութեան պատճառով մէջ չենք բերում :

Ստացող կաթուղիկոսի անունը յիշուած է Ղուկասի վերջում եր. 446 եւ ապա ընծայականի մէջ եր. 24-25 :

Ով յանակիդքն ծոցոյդ բան
Որ ծաղկեցար յազգս մարդկան

Պետ հովութե կարգիս աւծմ
ան : որ զայս մատեան աւետարան,
Մեզ հնչեցեր ճայն ցնծութե :
Ահա զքոյս առեալ քեզ տամ,
Բարձեալ ի ձեռս առաջի դամ :
Առ զայս նուէրս բարեխնամ :
Եւ յիս նաեա որ հաշտակամ :



Պատկ. 15.— Ձեռ. Երուս. No. 2027, 86բ., Մաշտոց, 1266 թուի

Եւ զչնորհս քո շրթան,
Հեղեր աւրհնեալդ յաւիտեան :
Դու զպճնողս քո բանի, եւ
Ըզ զարդարող այմն տառի :
Զոր Կոստանդին հովիւ բարի,
Յաթոռ նստո ընդ Պետրոսի
Տր իմ քս փրկիչ մարդկան,

Ընծայականը իւր բառերով, ինչպէս եւ խորանների մանրանկարչութիւնը շատ մեծ չափով ազդել են Հռոմկլայի մեծագոյն մանրանկարչի՝ Թորոս քահանայ Ռոսլինի գործերի վերայ, որի մասին պիտի խօսենք անմիջապէս յետոյ : Այստեղ էջ 4 և 9, Եւսեբիի և Կարպլանոսի խորաններն են, իրարից հեռացուած յետագայ կազմի ժամանակ : Եւ-